

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ – ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

LES LIVRES DU JOUR - RECENSIONS

ԱՌԱՔԵԼ ԴԱԻՐԻԺԵՑԻՈՑ

ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

Երեւան, 1990

Պատմութիւնն ու պատմագրքերը, որեւէ ժողովրդի անցեալի կարեւոր փաստերն ու վաւերագրերն են, որոնք տալիս են տուեալ ազգի ունեցած կարեւոր անց ու դարձերի պատմութիւնը, եւ հիմք ծառայում նրան հարստանալու իր անցեալով եւ աւելի հիմնաւոր ու արժանի տեղ գրաւելու այլ ազգերի մօտ:

Հայ ժողովրդի, նման կարեւոր պատմութիւններից մէկն էլ Առաքել Վրդ. Դաւրիժեցու «Գիրք պատմութեանց»ն է, որի վերջին տպագրութիւնը կատարուել է 1990 թուին Սատենադարանի հրատարակչութեամբ եւ աշխատասիրութեամբ ու բնագրի գիտահամեմատական ձեւով, Լ. Ա. Խանլարեանի կողմից:

Ինչպէս գիրքի ներկայացման երկու խօսքում է ասուած. «Առաջին անգամ գիտական հասարակայնութեանն է ներկայացւում հայ ականաւոր պատմագիրներից մէկի՝ Առաքել Դաւրիժեցու (XVII դ.) «Գիրք պատմութեանց»ի գիտահամեմատական բնագիրը, Առաքել Դաւրիժեցու երկը հարուստ աղբիւր է ոչ միայն հայ ժողովրդի եւ Հայաստանի, այլ եւ հայկական գաղթօջախների, ինչպէս նաեւ Հայաստանի հարեւան երկրների՝ Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի պատմութեան»:

Գրքի սկզբում որպէս լուսաբանութիւն, գրուել է 48 էջից բաղկացած (էջ 5-52) «Յառաջաբան», ուր գիտական ձեւով մանրամասն վերլուծւում ու բնութագրւում է գրի առնելու զրդապատճառներն ու գրքում տեղ գտած նիւթերը:

Ինչպէս «Յառաջաբան»ում է ասուում եւ այն ինչ որ իրականութիւն է, թէեւ 17րդ դարի եւ յատկապէս Իրան-թուրքական պատերազմների մասին այլ մասնաւոր գրքեր կան, բայց եւ դրանցից՝ ոչ մէկը, չունի

այն արժեքն ու մանրամասնությունները, ինչ տրուած է Առաքել Դաւրի-
ժեցու պատմութեան մէջ:

Այս գրքի կարեւորութիւնը յայտնի է եղել Հէնց իր գրելու օրից, եւ
Հէնց այդ պատճառով է, որ դեռեւս պատմագրի կենդանութեան օրօք
1669 թուին, որն աննախընթաց է Հայ գրականութեան մէջ, Ոսկան
Երեւանցու կողմից, Ամստերդամ տպագրուել է այդ պատմագիրը:
Դրանից յետոյ տպագրուել է եւ երկու անգամ 1884 եւ 1896 թուական-
ներին Ս. Էջմիածնում:

Ինչպէս սկզբում յիշուեց, ներկայ հրատարակութիւնը աւելի գի-
տական հիմունքով եղած եւ գրչագրերի բաղդատման ձեւով է կա-
տարուել, որի համար եւ աւելի մեծ նշանակութիւն ունի, նախորդների
մէջ տեղ գտած տարընթերցուածները եւ գրիչների կողմից վրիպում-
ներն ու բացթողումները լրացնելու եւ ամբողջացնելու տեսակէտից:
Մի խոշոր բաց, որ ունեցել է առաջին տպագրութիւնը, այն է, որ
այնտեղ Հէն տպագրել մեծ թուով պարբերութիւններ, նախադասու-
թիւններ եւ անգամ հատուածներ: Դրանցից յատկապէս խիստ արժէք է
ներկայացնում Նոր-Ջուղայի 17րդ դարի յայտնի նկարիչ Մինասի
մասին գրուածը:

Այստեղ մենք զանց ենք առնում խօսելու պատմագրքի ունեցած
մեծ կարեւորութեան մասին, որի առթիւ բազմիցս գրուել ու խօսուել
է, ուստի այստեղ անհրաժեշտ ենք գտնում անդրադառնալու մի քանի
փոքր վրիպումների, կատարուած հրատարակողի կողմից:

Փահրա գիւղի անունը թէ՛ «Առաջաբան»ում (էջ 22) եւ թէ՛ բնա-
գրում, յիշուած է Փահրան, պէտք է լինի Փահրա, ն-ն թրեւեւ որպէս
յօդ աւելցուել է եւ դարձել անունից անբաժան: Նոյն ձեւով յիշուած է
նաեւ բնագրի մէջ (էջ 159, 160): Փերիան կամ Փարիան երկրի է (էջ
522), այլ Սպահանի նահանգի հայաբնակ մի գաւառը, որ այժմ եւս
հայեր են բնակուում եւ կոչւում է Փերիա: Նախաբանի մէջ (էջ 19)
գրուել է Փերի գաւառ:

Համար 135 ծանօթագրութեան մէջ (էջ 515) խօսելով Նոր Ջուղա-
յում Նաչատուր Կեսարացու հիմնած տպարանի մասին, դրա թուականը
գրում է 1639, մինչդեռ դրա առաջին գիրքը՝ «Սաղմոս»ը տպագրուել
է 1638 թուին, իսկ տպարանը հիմնուել է 1636 թուին. (Այս մասին
տեսնել «Նոր Ջուղայի տպարանը...» Նոր Ջուղա, 1972, էջ 15-36):

Շահ Աբբաս առաջինը կամ մեծը, սերում է Սաֆաւեան տոհմից,
ինչպէս որ պարսից լեզուով եւս գրւում է Սաֆաւի կամ Սաֆաւեան,
մինչ սոյն գրքի մէջ եւս, եւ յաճախ այլ գրքերում, որոնք լոյս են

* Այդ բացթողումների ցանկը տրուել է «Միոն» ամսագրում (Երուսաղէմ, 1970 թ.,
Յուլիս-Օգոստոս, էջ 329) պատմագրի մահուան 300 ամեակի առթիւ տպագրուած մեր
յօդուածում:

տեսնում Հայաստանում, գրւում է «Սէֆեան» ազգանունով, որ ճիշտ էլ եւ չի համապատասխանում պարսկական աղբիւրներին ու նաեւ հայկականին:

Ի հարկէ կան նաեւ այլ փոքր վրիպումներ, որ յատուկ արժէք չեն ներկայացնում, որ զանց ենք առնում յիշելու, կարեւորն այն է, որ գիտական ձեւով հրատարակուել է Առաքել Դաւրիժեցու «Գիրք պատմութեանց»ը բանասէր Լ. Խանլարեանի ջանքերով, որ արժանի է գնահատանքի՝ իր կրած մեծ նեղութեան համար, որի առթիւ իրենք ենք մաղթում նոր ոյժ ու կորով եւ նորանոր յաջողութիւններ:

Գրքի վերջում ունի ծանօթագրութիւններ (էջ 505-563), գրականութեան ցանկ (էջ, 563, 569), բառարան (էջ 570-574) եւ անձնանունների ու տեղանունների բառարան (էջ 515-522) որ շատ օգտակար են:

1970 թուին մեծ շուքով տօնուել է Առաքել Դաւրիժեցու մահուան 300 ամեակը եւ յատկացուել մամուլի բացառիկներ, որին արժանի էր նա:

Նոր Զուղա

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ